Գործ թիվ ԵԴ/3410/02/23

Վ Ճ Ի Ռ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

22 մարտի 2023թ. **ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)

նախագահությամբ դատավոր՝ **Տ. Գրիգորյանի**

Քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<Սիսիանի Հաց>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) (գրանցման համար 88.110.00683, ՀՎՀՀ 09801955, հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Գայի փ., շ. 1/2-1) ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ Պատասխանող) (հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 1)՝ 30.12.2022թ. թիվ 4696-Ա որոշումը՝ <<Սիսիանի Հաց>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով անվավեր ճանաչելու վերաբերյալ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր <<Սիսիանի Հաց>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ի.Միրզոյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 30.12.2022թ. թիվ 4696-Ա որոշումը՝ <<Սիսիանի Հաց>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Դատարանը 03.02.2023թ. որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու, գործը դատական նիստում քննելու մասին միջնորդությունը մերժելու, ապացույց պահանջելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին:

Դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ հայցի ապահովման վերաբերյալ հայցվոր ընկերության ներկայացուցչի միջնորդությունը մերժվել է:

Դատարանի 14.03.2023թ. որոշմամբ գործի քննության ժամկետը երկարաձգվել է, որով եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 22.03.2023թ.:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ հայցադիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 50.000 ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

<<Սիսիանի Հաց>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 30.12.2022թ. թիվ 4696-Ա որոշումը՝ <<Սիսիանի Հաց>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Երևանի քաղաքապետարանի՝ 30.12.2022թ. թիվ 4696-Ա որոշումը՝ <<Սիսիանի Հաց>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, ճանաչել անվավեր:

Երևանի քաղաքապետարանից հօգուտ <<Սիսիանի Հաց>> ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կատարում պահանջող մասով կամովին չկատարելու դեպքում կկատարվի ՀՀ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Տ.ԳԲԻԳՈՐՅԱՆ**